

**ՀԱ.**

**Վերնագիր չկայ հետագայ թուղթին վրայ, վասն զի մասն է կորսուած նա-  
մակի մը. սակայն, յայտնի է, զրուած է առ Մխիթար:**

**Հ. Միքայէլ Վ. քաղաքական ղէպքերու խզճամբտ շարունակութիւնն է որ կը  
հաղորդէ Վենետիկ:**

. . . Գարձեալ եթէ կամիք իմանալ զլուր ինչ ի կողմանէ պատերազմի, հաւաստի  
և ճշմարիտ լուր ոչ գոյ. ի լաւ անդր ամենեկին ոչ գոյ. բայց ի վատթար կողմ պէտպէս  
զրոյցք գոն. մտրլուի տղան ասաց թէ 30,000 չափ զօրք հիւանդ կայ, վիտինու տէն  
քաշուեր են, անդէն անկեալ է հիւանդութիւնն, վասն այսորիկ քաշուեր են ի կողմն  
դմզվարայ: Եւ յայմէ ասացեալ ի նիշու կողմէ խմբիցն 16,000 զօրք ուղարկեալ ի կողմն  
պօսնայու. տաճիկքն զոլով բազումք, ի մէջ առեալ զնոսա և կոտորեալք: Եւ յայլոց,  
թէ զօրք տաճկաց ի կողմունս գոայովու եկեալ բանակեալ, ի ձմեռանս կամ զդմզվար,  
կամ զպէլկրատ պաշարէ: Եւ յայմէ, թէ ի մէջ զօրաց մօսկօֆու ևս հիւանդութիւն  
անկեալ, յետս քարշեալ, պէնտէրի անուոնն ոչ է ճշմարիտ, աստէն աւելի չարիք լսենք,  
քան թէ ի վէնէտիկ: Աստ զասլրանս տաճկաց և յունաց որք են ստորադրեալք տաճկաց  
կնքեալ և իբր յարգելանոցի եղեալ էին. երկու օր է, որ բացին և թոյլ ետուն: Կայսր  
ոչ է աստ, այլ արտաքոյ քաղաքին, ի յանտառս յամենայնում արուր որս գնայ. ոմանք  
ասեն թէ առ ի փարատել զվարանմունս իւր աննէ զայս, ասեն թէ ուր գտանիցի արդեօք  
փրինչիփէ և ճէնիոսին պէս, որ զպատերազմ կառավարիցէ: Յորժամ մեռեալ է Եւճէնիոսն,  
տաճիկքն ասացեալ են աստ, կէթտի կառթալըն պիր գանատը: . . . Կաև լուայ թէ ի նիշու  
հայեր եկեալ են ի պէլկրատ, ևս մի քահանայ իրիցկնով. լուայ ևս թէ ի ստամպօլ  
եայտախճի են եղեալ ի դրունս եկեղեցեաց հոռոց և հայոց, զի տուայ արասցեն վասն  
պատերազմին: . . .

Գրեցաւ յամի Տեառն 1737ին  
տեպտեմբերի 21ին  
2 գիր ի վէնայու

Գերայարգութեան քում  
Մնամ պատրաստական ծառայ ամենայնի  
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

**ՀԲ.**

**Պաշպալովի կամ Եղիսարեթուպոլսի առաքելութիւնը մշակողներէն մին է Հ.  
Թէոդորոս վարդապետ Յովհաննէսեան Պաշպալովցի, որուն երկրորդ թուղթն է որ  
կը հրատարակենք հոս:**

**Նա իւր քաղաքէն առ Մխիթար կը ղրկէ պատմական տեղեկագրութիւնս:**

Օրձնեալ: Էղիցի: Յիսուս: Քիստոս:

Գերայայժառի և Գերչարգեղոյ Տեառն Մխիթարայ Աբրայի  
Հօրոյ մերուն արժամաւորագրենեղի՝ մեծա: խոնարմուշեակի գոտս նաւբուրերով  
մատուցանեմ զորդիական ողջոյն, և այլն:

. . . . բոլոր դրանսիլվանիայ յոգուց հանեն սակս մեծի երկիւզի, և ի ահացուցիչ  
կարծեաց եկելոց ի վերայ տիգերաց, մինչ զի գրեթէ ամենեքեան զամենայն գոյս իւ-  
րեանց փախուցին ի սիպին, ոչ միայն հայք, այլ նաև մասաղք. և գոյ ձայն թէ Պօնա-